ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

3 հուլիսի 2019 թվականի N 229 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշման թիվ 1 հավելվածի 1-ին կետով, մարզի և համայնքների զարգացման ծրագրերի իրականացման ընթացքը, ինչպես նաև համայնքներում առկա ու ծագող խնդիրները համատեղ քննարկելու և լուծման ուղիներ մշակելու նպատակով

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի համայնքների ղեկավարների հետ աշխատանքային խորհրդակցություններ անցկացնելու ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին՝ յուրաքանչյուր ամսվա համար նախատեսված խորհրդակցության օրվանից երկու օր առաջ մարզպետին ներկայացնել համայնքի ղեկավարների հետ քննարկման ենթակա հարցերը՝ անհրաժեշտ վերլուծությամբ և համապատասխան տեղեկանքով:
3. Սույն կարգադրությամբ հաստատված ժամանակացույցով նախատեսված խորհրդակցությունների կազմակերպման և անցկացման պատասխանատվությունը դնել մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության վրա:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

03.07.2019

X

2019թ. հուլիսի 3
ք.Իջևան

Հավելված
Հաստատված է ՀՀ Տավուշի
մարզպետի 2019թ. հուլիսի 3 -ի
թիվ 229-Ա կարգադրությամբ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ույց

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

NN ը/կ	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*9*
1.	16	15	16	14	11	10

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ